

7339


Հ. 3. Դաշնակցութեան խմբերի
հետ պարաբանական ճանաչելի
օրաց-իր

329.14

Հ-24

ԱՄ. Մ.

1807



1970

199 48

Հ. ԳԵՐԵԱՅԻՆ ԹՈՒՆ ԽՄԵՐԻ ՀԵՏ ՊԵՐԵՊԵՆՈՒ

329.14
Հ-24

ՄԱՏՈՒՆ ԹՐԱԳԻՏ

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

ՀՐԱՏՐԱԿ. ԲԱԳԻՆՅԱՆ. ՍԵԿՏ.

1907

2010

300

329.14

1343-ՊԸ

2-24

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Բագուայ պրոպականդիստների սեկցիան որպէս-
զի հնարաւորութիւն տայ գիտակից ընկերներին աշ-
խատաւոր մասսաների հետ սիստեմատիկաբար պա-
րապելու, որոշեց հրատարակել այս պարապմունքների
ծրագիրը: Այս ծրագիրը կազմելիս սեկցիան օգտուել
է ուրիշ յեղափոխական սոցիալիստական կուսակցու-
թիւնների բոլոր մատչելի պարապմունքների ծրագր-
ներից:

Ժամանակի սղութեան պատճառով սեկցիան հնա-
րաւորութիւն չունեցաւ աւելի մանրամասնօրէն մշակե-
լու թէ ծրագիրը և թէ աղբիւրները: Համոզած լինե-
լով որ առանց թերութիւնների չէ այս առաջին փոր-
ձը, խնդրում ենք մեր գիտակից ընկերներին անել ի-
րենց գիտողութիւնները, որից սխալիւր կերպով կ'օգ-
տուենք երկրորդ հրատարակութեան ժամանակ:



1870

2003

Հ. Յ. Դաշնակցութեան խմբերի հետ պարապե-
լու մատչելի

ԾՐԱԳԻՐ

I ԱՇԽԱՏԱՆՔ ԵՒ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ

Մարդկային պէտքերին բաւարարութիւն տւող
նիւթը մատակարարում է բնութիւնը: Որպէսզի այդ
նիւթը գործածութեան համար պիտանի լինի, նա
պէտք է մշակւի. դրա համար անհրաժեշտ են մարդու
աշխատանքը և արդիւնաբերութեան առանձին գոր-
ծիքներ:

Այդպիսի մշակած նիւթը կոչւում է աշխատան-
քի արդիւնք (պրօդուկտ): Եթէ արդիւնքները փոխա-
նակում են, կոչւում են ապրանք: Ապրանքների փո-
խանակութիւնը կատարւում է նրանց արժէքի համա-
ձայն: Ապրանքների արժէքը վերջի վերջոյ որոշւում է
աշխատանքի այն քանակով, որը գործ է դրած նրանց
պատրաստելու — արտադրելու վրայ: Ժամանակակից
հասարակութեան մէջ բուրժուազիան խլել է աշխա-
տւորների ձեռքից նիւթը և գործիքները և դարձրել
է իր մասնաւոր սեփականութիւնը:

Նիւթը և գործիքները կոչւում են դրամագլուխ —
կապիտալ. իսկ նրանց տէրերը — դրամատէրեր — կապի-
տալիստներ: Իսկ անմիջական արտադրողները՝ զրկւե-
լով նիւթից և արտադրութեան գործիքներից, դարձել
են բանւորներ, որոնք ապրում են իրանց բանւորական
ոյժը կապիտալիստներին ծախելով: Կապիտալիստները
գործարանների համար բանւորներ վարձելով, նրանց



11854+

93416-42

վճարում են իբրև աշխատավարձ (заработная плата) աշխատանքի վրայ գործ դրած ժամանակի միայն մի մասի համար: Աշխատանքի մնացած անվճար մասը, որը կոչւում է օգուտ կամ շահ, իւրացնում է կապիտալիստը:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Юрковская—Краткій очеркъ исторіи человѣческаго хозяйства. Карышевъ—Экономическія бѣсѣды. Свидерскій—Трудъ и капиталъ. Բախ—Հարուստներ և աղքատներ: Желѣзновъ—Очерки политической экономіи. Кольцовъ—Машина. Лафаргъ—Умственный трудъ и капиталъ. Дикштейнъ—Кто чѣмъ живеть.

II ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ԵՒ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ՇԱՀԵՐԸ

Նոր արդիւնքները (պրօդուկտ) միայն աշխատանքով կարող են ստացւել: Աշխատում են միայն բանւորները, որովհետեւ բուրժուա կապիտալիստները իրենք չեն աշխատում, այլ իբրև մակարոյծ (պարագիրտ) ապրում են ի հաշիւ բանւորների աշխատանքի: Նրանց շահերն հակառակ են բանւորների շահերին, որովհետեւ զրամագլխից շահ ստացող մասը աճում է ի հաշիւ աշխատավարձի և ընդհակառակը: Նոյնքան պակասում է շահը, որքան աւելանում է աշխատավարձը: Բանւորների շահերն ընդհանուր են միայն աշխատաւոր գիւղացիութեան շահերի հետ, որովհետեւ վերջինս ոչ ոքի չի շահագործում, այլ ապրում է իր սեփական աշխատանքով: Բացի այն, գիւղացիութեան այս մասն ինքը շահագործւում է կալածատիրոջից և զանազան բուռնցքներից, վաշխառուներից, առևտրականներից և ժամանակակից բուրժուական պետու-

թիւնից: Իսկ երբ սրանք տնտեսապէս քայքայւում են, անմիջապէս անցնում են վարձու բանւորների շարքը: Կապիտալիզմի զարգացման հետ անխուսափելիօրէն կապւած է բանւորի անապահովութիւնը: Արտագրութեան չկազմակերպւած լինելու պատճառով յաճախ տեղի են ունենում արդիւնաբերական տագնապններ—կրիզիսներ:

Կրիզիսը առաջ է բերում արդիւնաբերութեան կրճատումն, և այդ պատճառով հազարաւոր բանւորներ մնում են առանց աշխատավարձի: Սրա պաճառն այն է, որ աշխատավարձի քանակը առնասարակ որոշւում է ամենից աւելի անգործ բանւորների մրցութեան—կօնկուրենցիայի ոյժով, չկազմակերպւած և անգործ մասսայի ճնշումով, որը կրիզիսների ժամանակ շատ աւելի ուժեղ է լինում:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

О сытыхъ и голодныхъ (изд. «Свободы») Դիկ-շաէյն-Օ^oվ ինչով է ապրում. Кризисы и безработница (изд. П, С.-Р.) Бесѣды о землѣ (П. С.-Р.) Гобсонъ—Проблемы бѣдности и безработицы. Кауцкій—Эрфуртская программа. Брандъ—Современная женщина, рабочій день. Бебель—Женщина и Соціализмъ. Шиппель—Современная бѣдность и перенаселеніе. Кауцкій—Классовыя противорѣчія наканунѣ 1789 г.

III ՍՕՑԻԱԼԻԶՄ

Ծանր է աշխատաւոր մարդու վիճակը: Նա միա-ժամանակ տառապում է և՛ կրիզիսներից, և՛ շահագործողներից, և՛ կառավարչական պաշտօնեաների կեղեքումից: Բուրժուա—կապիտալիստները և նրանց բա-

րեկամ՝ ցարի չինոֆիլները ոչ միայն նրանց աշխատանքն են կողոպտում, այլ և վերաւորում են նրանց անձի արժանապատուութիւնը, վարւելով նրանց հետ, որպէս ստորին կարգի էակներին հետ: Այս բոլոր չարիքից դուրս գալու միայն մի ելք կայ—այն է՝ ստեղծել երկրի վրայ սօցիալիստական կարգեր: Միայն այդ դէպքում կը ջնջւեն կրիդիսները, շահագործութիւնը և անհաւասարութիւնը կամայականութեան հետ միասին: Սօցիալիզմի ժամանակ արտադրութիւնը կը լինի համայնական, ուստի և կազմակերպւած: Արտադրութեան գործիքները կը պատկանեն ոչ թէ բուրժուա—կապիտալիստներին, այլ ամբողջ հասարակութեանը, և, հետեաբար, շահագործութիւն չի լինիլ և ամեն մի արտադրող—բանուոր ինքը կօգտուի իր աշխատանքի պտուղներով: Ամեն մէկը բոլորի հետ համահաւասար մասնակցութիւն կունենայ հասարակութեան գործերը կառավարելու մէջ, ամեն մի գործունէութիւն խիստ կօնսորօլի կենթարկուի, և կամայականութեան սահման կը դրուի, Բուրժուական կարգերից սօցիալիստականին անցնելը (յեղափոխութիւն և բարենորոգութիւն—ռէվօլուցիա և ռէֆօրմացիա): Համառօտ պատկեր ապագայ սօցիալիստական կեանքի ըստ Ատլանտիկոսի, Կառլեկու և Բէլլամիի.

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Кауцкій—Соціалная революція. Зомбартъ—Соціализм и социальное движение в. XIX в. Марксъ—Манифестъ. Атлантикусъ—Государство будущего. Бах—Экономическіе очерки. Беллами.—Через сто лѣтъ.

«Յառաջ»-ից Ժ. Ժօրժա—Բուրժուական սեփականութիւնը և նրա գրաւումը: Ժ. Գէդ և Պ. Լաֆարգ—սոստեսական զարգաց. և սօցիալիզմը:

IV ԲԱՅԱՌԻԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱԻՈՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆԸ ՄԱՍՆԱԻՈՐԱՊԷՍ.

Սօցիալիստական կազմակերպութիւնը ձեռնտու է միայն աշխատաւորների համար, նա ձեռնտու է նաև բուրժուազիայի և ոչ էլ նրա բարեկամ՝ ուսու ինքնակալութեան համար, որովհետև նա վերացնում է շահագործելու, կողոպտելու և ժողովրդին ծաղրելու հընարաւորութիւնը: Ուստի նրանք որքան ոյժ ունեն ձգտում են թոյլ չտալ նրա առաջ գալուն: Մեզանում սօցիալիստական շարժման դէմ անմիջական կռիւր վարում է կառավարութիւնը: Դրա համար նա պահում է ոստիկանների, լրտեսների, ժանդարմների, չինոֆիլների, զօրքի ամբողջ լէգիօններ, բանտեր, տաժանակիր աշխատանք, կախաղան: Հոգեւորականութիւնը և կրօնը ծառայում են ժողովրդի հարստահարիչներին: Զանազան ազգերի հանում են իրար դէմ: Ռուսական կարգերի համառօտ տեսութիւն (բացառիկ օրէնքներ խօսքի, մամուլի, գումարման և այլ ազատութեան դէմ): Այս բոլոր միջոցներով կառավարութիւնը սարսափելի կերպով խանգարում է սօցիալիզմի զարգացումը մեզանում: Ուստի անհրաժեշտ է առաջին տեղը տալ ինքնակալութեան ոչնչացմանը: Առանց ինքնակալութիւնը ջնջելու անկարելի է ստեղծել այնպիսի քաղաքական և տնտեսական պայմաններ, որոնք աւելի և աւելի դիւրացնէին և արագացնէին սօցիալիզմի յաղթանակը: Այդ պայմանները ցոյց են տրւած Հ. Յ. Դաշնակցութեան նազագոյն ծրագրի մէջ (պրօգրամմ-միւսիմում):

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Строев—Жизнь московскаго государства передъ реформой. Князьковъ—Какъ сложилось и пало крепостное право въ Россіи. Шишко—Разсказы изъ русской исторіи. I. II и III т. Царское самовластіе въ Россіи (изд. «Свабоды») Плехановъ—Политическій строй и рабочіе. Кархуновъ—Рабочее дѣло въ Россіи. Милюковъ—Очерки по исторіи русской литературы (исторія бюджета 5—6) Ходскій—Основы государственнаго хозяйства. Очковъ—Царская казна.

V ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ազգային հարցը համաշխարային պրօբլեմներից մէկն է: Սօցիալիստական գրականութիւնը մինչև օրս շատ թեր ու դէմ կարծիքներ ունի այդ խնդրի մասին: Սակայն նկատուում է երկու որոշ հիմնական ուղղութիւններ այդ խնդրի վերաբերեալ—մատերիալիստական (Մարքսիստական) և բէալիստական: Ըստ մարքսիստական դօգմայի ազգային խնդիրը մի բուրժուական խնդիր է, որը պրօլետարիատին բոլորովին չի վերաբերում: Նա յետադիմական է, որովհետեւ բուրժուազիան իր սեփական շահերից զրոգուած ստեղծում է «ազգային դատ» պրօլետարիատի դասակարգային գիտակցութիւնը միազնեւում համար: Պրօլետարիատը բացարձակ հակառակորդ է ազգային դատերի: Այդ պատճառով Սօց.-Դէմօկրատիան տարրիների ընթացքում թշնամական դիրք է բռնել դէպի ազգային խնդիրը: Շնորհիւ նրա տարած կեղծ կօմօպօլիտական

պրօպագանդի, որը մատերիալիստական աշխարհայեացքի բացասական կողմերից մէկն է կազմում, այսօր տիրում է խառնաշփոթութիւն Ս. Դ.-ական մտածողութեան մէջ ազգային խնդրի վերաբերմամբ: Մեզ մօտ ազգային խնդիրը յաճախ շփոթում են մարդկեր շովինիզմի հետ, որը ճիշտ որ բուրժուազիայի ձեռքին մի խոշոր դէնք է իր շահասիրական զգացմունքներին գոհացում տալու համար:

Այլ է բէալիստական շկօլայի տեսակէտը, այդ խնդրի վերաբերմամբ: Ընդունելով, որ միևնոյն ընտանիքին պատկանող, կապուած նման անցեալով, միևնոյն տրագեցիաներով, ընդհանուր լեզուով ու զրականութեամբ, արիւնակցական կապերով և նոյնաճանաչ սփորմաններից մէկն է ներկայացնում, բէալիստական ըշկօլան ազգային խնդրի բաւարար լուծումը համարում է այն խոշոր էտապներից մէկը, որը տանում է մարդկութիւնը դէպի սօցիալիստական կարգերը:

Հ. Յ. Դաշնակցութիւնը, իբրեւ բէալիստական շկօլային պատկանող սօցիալիստական կուսակցութիւններից մէկը, ազգային խնդրի լուծումը չի յետաձգում մինչև սօցիալական համաշխարային յեղաշրջումը, այլ այդ հարցի այժմայ լուծումը համարում է քաղաքական այն խոշոր ակտերից մէկը, որը պիտի կատարի աշխատաւոր մասսան սօցիալիզմին համեմեւում համար:

Հայ աշխատաւոր մասսան իր սօցիալիստական minimum-ծրագիրը պիտի եզրափակի ազգերի հաւասարութեան պահանջով: Քանի չկայ ազգերի հաւասարութիւն, աշխատաւոր ժողովուրդը չի կարող յաջող

կերպով տանել իր դասակարգային կռիւը: Նա միշտ ստիպւած է լինելու ազգային տագնապանների ժամանակ, որը ստեղծում է բռնակալ կառավարութիւնը, մոռանալ իր դասակարգային թշնամուն և միանալով բուրժուազիայի հետ դուրս գալ ընդհանուր ազգային թշնամու դէմ. հէնց այդ մօմենտն է որ շահագործում է բուրժուազիան իր դասակարգային տիրապետութեան համար:

Հ. Յ. Դաշնակցութիւնը իբրեւ հայ աշխատաւոր մասսայի իսկական բարեկամ, Ռուսաստանի մեծ յեղափոխութեան առաջ միւս կորդինալ հարցերի շարքում առաջադրում է և ազգային հարցը: Նա գտնում է որ ազգային խնդիրը կարող է բաւարար լուծում ստանալ այն ժամանակ, երբ կը հաստատուի մի կողմից դեմօկրատիայի լիակատար տիրապետութիւնը, իսկ միւս կողմից կապահովւի ազգերի ազատ կուլտուրական զարգացումը: Այդ նպատակով Կովկասի համար Հ. Յ. Դ.-ը պահանջում է դեմոկրատիական հանրապետութիւն, ֆեդերատիւ հիմքերով, կապւած նոյնպիսի կապերով Ռուսաստանի հետ: Բացի այդ նա պահանջում է ազգային կուլտուրական աւտօնօմիա, որը վերջնականապէս հնարաւոր կը դարձնէ ազգերի կուլտուրական ազատ զարգացումը: Խնդրի միայն այդ ձևի լուծումը, մեր կարծիքով կարող է վերջնականապէս վերացնել ասպարիզից ազգային խճճած խնդիրը և ստեղծել այն նորմալ պայմանները, երբ հայ աշխատաւոր մասսան հնարաւորութիւն կունենայ ճակատ առ ճակատ կանգնելու իր իսկական թշնամի կապիտալի առաջ, ազատ զանազան կողմնակի կապանքներից:

ա) Ակնարկ Հայկական պատմութեան վրայ.

բ) Կովկասահայերը Ռուսական տիրապետութեան տակ. գ) Ռուսական քաղաքականութիւնը մինչև Ալէքս. III-ը. դ) Ալէքս. III-ից յետոյ մինչև մեր օրերը. Գաղութային քաղաք. գիւղակ. կեանքում. ա) Ռուսացման քաղաքականութիւն. բ) զանազան հիմնարկութիւնների փակում. գ) Ուսումնարանների փակումը. դ) բացառիկ հալածանք մամուլի դէմ. ե) կալաճների գրաւումը. զ) թուրք հայկական ընդհարումներ. է) Հ. Յ. Դաշնակցութեան առաջ գալը Տաճկահայկական հողի վրայ և նրա գործունէութիւնը Կովկասում: ը) Հայ կական բուրժուազիան և Մշակականները. թ) Հայ խուլիգանական հոսանք. (Միհրանականութիւնը) ժ) Հոգեւորակ. գերիշխանութեան անկումը և նոր ձեռնարկներ նոր տիրապետութեան:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Пименовъ—Единство Государства и автономія Кокошкинъ—областаная автономія и единство Россій. Георгъ Јелинекъ. Право меншинства (изд. народн. право.) О правахъ національностей и централизация (сбор. изд. Право) С. Авалова—Областные сеймы.

Շ. Գորոք—Ինչպէս իրականացնել ազգութիւնների հաւասարութիւնը «Յառաջի գրադ.» Նաւատորմակ. Ազգային Հարց և Ֆեդերացիան «Յառաջի գրադարան»:

Автономія, федерація и національніи вопросъ (изд. Народ. свобод.) Ազգային Հարցը և սօցիալ դեմօկրատիան «Յառաջի գրադարան»

Կ. Կառուցկի. Ազգութիւնների հարցը Ռուսաստանում «Յառաջի գրադարան»:

Միջազգային սօցիալիզմը և ազգութիւնների կռիւը

Աւստրիայում (բրիւնի պարտէյտակ)

Վարանդեան—Հայրենիքի գաղափարը: Պալասանեան—
Պատմութիւն Հայոց: Երիցեան—Կովկասեան Հայք:
Լէօ—Հայոց գրականութիւնը XIX դ. Ակնունի—Կով-
կասեան վերքէր: Ակնունի—Դէպի Կովկաս Дикій—Кав-
казская смута: Араратскі—Подвиги Царизма: Поче-
му армяне Бунтуютъ (изд. соц.-рев.)

VI ՏԱՃԿԱՀԱՅ ԴԱՏ

Նոյն տեսակէտով է մօտենում Դաշնակցու-
թիւնը Տաճկահայ դատին: Հ. Յ. Դ-ը գտնում է որ
Տաճ.-Հայ դատը, եթէ ընկնի բուրժուազիայի, կղերա-
կանութեան և խուլիգանական տարրերի ձեռքը, կը կա-
տարի Դամոկլիան Սուրի դերը հայ աշխատաւոր մաս-
սայի գլխին: Տաճկ.-Հայ դատը պիտի տարւի մաքուր
ձեռքերով, որպէսզի հայ աշխատաւոր մասսան չխաբւի:
Եւ միայն այն ժամանակ Տաճկ.-Հայ դատը կարող է
վերջնական լուծում ստանալ, երբ նրա ղեկավարը
կլինի աշխատաւոր ժողովրդի իդէօլօգ սոցիալիստա-
կան յեղափոխական Դաշնակցութիւնը:

Տաճկական պետութեան քաղաքական-տնտեսա-
կան ստրուկտուրան, դասակարգեր՝ պետութեան գը-
լուխը—«մարգարէի փոխանորդ» Սուլթանը կառավա-
րում է երկիրը զինուորական բերօկրատիայի միջոցով.
Ֆէօդալական մնացորդ իշխաններ (խաներ և բէկեր) և
նրանց յարաբերութիւնը կենտրոնական իշխանութեան
հետ, արդիւնաբերութեան ձևը, հողատիրութեան ձևը
և գիւղացիութեան զրութիւնը, հողագործի գիւղացիու-
թիւն, բանտրութիւն, հարկեր և տուրքեր: Փոքր Ա-
սիայի ազգերը և նրանց առանձնայատկութիւնները:

Հայերը տաճկական լծի տակ. Իսլամ ժողովրդի և «Բա-
յաի» տնտեսական իրաւական զրութիւնը և զրանից
բղխող յարաբերութիւնները. Արևելեան խնդրի ծա-
գումը, հպատակ ազգերի ազատագրական շարժումները
(յոյն, սերբ, բուլղար և այլն):

Հայկական հարցը 19-րդ դարու երկրորդ կիսում.
Հայկական ազատագրական շարժումները. Զէյթունի և
Սասունի անցքերը մինչև Ռուս-Տաճկական պատերազ-
մը. 61-ր յոդուածը: Հնչակեան և Արմենական կու-
սակցութիւններ (ծրագիր և գործնէութիւն, գնահա-
տում) Դաշնակցութեան սկզբնաւորութիւնը (ծրագիր և
տակտիկան, կազմակերպական սխաւէմ, գործունէութիւն
մինչև 1903 թ.) Ռուսաստանի ազատագրական շար-
ժումները և նրանց ազդեցութիւնը Տաճկաստանի
վրայ ընդհանրապէս և Տաճ. Հայ դատի մասնաւորա-
պէս. Ծրագրի և գործունէութեան ընդլայնացումը:

VI Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի

Զանչիեանի նամակները: Խաթակ — Հարկերը
Տաճկաստանում: Արծրունի—Թիւրքահայոց տնտեսա-
կան զրութիւնը: Մուրճ № — Թիւրքիայի ֆինանս-
ները: Հիւանդ Մարդ: Линч—Армения. Соловьев—
Восточный вопрос. Армяне въ Турнии—Сборн. Джан-
шиера. Մ. Յովհաննիսեանի—Գորդեան հանգոյց. Մ.
Յովհաննիսեանի—Դաշնակցութիւնը և նրա հակառա-
կորդները: Զէյթունցի—Զէյթունի անցեալէն և ներկա-
լէն: Сеньбось—Главы о восточн. вопросѣ. «Դրօ-
շակ»-ի բոլոր համարները:

VII Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԻԱԶԱԳՈՅՆ ԾՐԱԳԻՐԸ
ԵՒ ԻՒՐԱՔԱՆՁԻՐ ԿԵՏԻ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆԸ:

VIII ԿՈՒԻ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱ-
ՅԻ ԴԷՄ.

Յանուն լաւագոյն ապագայի—սոցիալիզմի—կառավա-
րութեան և բուրժուազիայի դէմ կուելու համար պէտք
է միանան բոլոր աշխատաւորները: Նրանք միայն միա-
ցած ոյժերով կարող են յաղթել: Ուստի անհրաժեշտ է
ամենքին բացազել մեր իդէալները և առհասարակ
վարել եռանդուն ագիտացիա և պրօպականդայ սոցիա-
լիստական և յեղափոխական գաղափարների հարար: Բացի
դրանից, քանի դեռ ևս սոցիալիզմը իրականացած չէ,
չի կարելի բաւականանալ միայն նախապատրաստական
պրօպականդայով և կազմակերպելով, այլ գործադուլի,
բոյկոտի, դեմօնստրացիայի, ցոյցերի, տերրօրի և ապս-
տամբութեան միջոցով պետք է ձեռք բերել մասնակի
յաղթութիւններ, պէտք է կորզել զիջումներ և քայքա-
յել կառավարութեան և բուրժուազիայի շարքերը: Յե-
ղափոխութիւնը վերջնականապէս յաղթահարելու է
ինքնակալութիւնը և նրա ունեւոր պաշտպաններին—
արտօնեալ դասակարգերին: Քաղաքական և տնտեսա-
կան նւաճումներ յեղափոխութեան ժամանակ: Ինքնա-
կալութեան դէմ վարած կռիւ ժամանակ կարող են օգ-
նել յառաջագէտ տարրերը. սակայն այդ տեղի կունե-
նայ միայն այս կռիւ մէջ, յետագայում սրանք էլ մեր
թշնամիներն են, ինչպէս առհասարակ ամբողջ բուր-
ժուազիան: Աշխատաւորական սոցիալիստական յեղափո-
խութիւնը որպէս վերջնական յաղթանակ: Գործադուլ-

լի, բոյկոտի, ցոյցի, ընդհանուր գործադուլի, ապստամ-
բութեան նշանակութիւնը բացատրել:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Что такое революція (изд. „Свободы“) Некра-
совъ—Ничего съ нами не подѣлаешь. (изд. П. С.-Р.)
Что нужно знать и помнить каждому рабочему (изд
Е.-Д.) Ко всему русскому крестьянству (изд. П. С.-
Р.) «Յառաջ»-ից:

Պեշխօնով—Հաց, լոյս և ազատութիւն: Նօյժօտօր-
ժեսկի—Ինչ է իրաւական պետութիւն: Արեղեան—Դէ-
մօկրատական ընտրութիւն: Լասալ—Սահմանադրու-
թեան էութեան մասին: Վաս. Գօլուբև—Ինչ է ժողո-
վրդապետութիւնը: Ալ. Դիւնան—Ժողով. օրէնսդր.
դաշնակ. Զւիցցերիայում: Նեկրասով—Ինչ կարգեր են
հարկաւոր ժողովրդին:

IX Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՒ ՍՕՑԻԱԼ-ԴԵ-
ՄՈՆԻՐԱՏ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ ԵՂԱՄ
ՏԱՐՔԵՐՈՒԹԻՒՆԸ:

Ա. Տերրոր և Գիւղացիական հարցը:

Բոլոր մարդիկ, որոնք սոցիալիզմի կողմնակից են
և ցանկանում են սոցիալիստական կարգեր մտցնել,
կոչւում են սոցիալիստներ: Ինքնակալութեան և բուր-
ժուազիայի դէմ յաջող կերպով կուելու համար նրանք
մտնում են Հ. Յ. Դաշնակցութեան մէջ, որը ընդունում
է իր մէջ նրանց, որոնք իւրացրել են սոցիալիզմի ի-
դէալները և ցանկանում են կուել նրան շուտով իրա-

կանացնելու համար: Այս կուսակցութիւնը ղեկավարում է ինքնակալութեան և բուրժուազիայի դէմ վարած ամբողջ կռիւր: Հ. Յ. Դաշնակցութիւնից բացի կայ նաև Սօցիալ-Դեմոկրատների կուսակցութիւնը: Նա Դաշնակցութիւնից տարբերուում է նրանով, որ գիւղացիութիւնը համարում է սօցիալիզմի թշնամի, նոյնպէս չի ընդունում տերրոր և առհասարակ սակաւ իմաստ է տեսնում մարդկանց անհատական ջանքերի մէջ, այլ աւելի յոյս է տաժում տնտեսական կեանքի բնական ընթացքի վրայ:


Բ) Ազգային հարց: Պետական կազմակերպչական ձեւերի վերաբերմամբ մեր և նրանց տարբերութիւնը: Թուսական յեղափոխական շարժման համառօտ պատմութիւնը:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Шишко—Какъ смотрят соц.—демократы и соц.—революционеры на крестьянство и земельный вопрос: Хилков—Террор и массовая барьба.

Մ. Յովհաննիսեան—Դաշնակցութիւնը և նրա հակառակորդները:

Զերնով—Գիւղացին և Բանուորը: Պրամպուլինի—Գիւղացիներին: Ե. Կարանով—Հող. Հարցը Նոր-Զելանդիայում: Ա. Ե. Ինչպէս կարելի է լուծել Հող. Հարցը: Դիկշտէյն—Մի գրոյց հողի մասին: Լ. Շիշկօ—Ագրար. ծրագրի հարցը և գիտակ. սօցիալիզմի տեսութիւն: Պետրով—Երկու ծրագիր: Անսկիյ—Գիւղացիական հարցը Ֆրանսիայում: Զերնով—Դասակարգային կռիւ թէօրիայի շուրջը: Զակ.—Հող և կապիտալիզմ: Զերնով—Պրօլետարիատը և աշխատաւոր գիւղացիութիւնը: Վերիլան—Սոցիալիզմի հարցը իրաւարանական տեսակէտից:



2013

<< Ազգային գրադարան



NL0040514

7338

